



ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲԴԽ-48-Ո-Կ-13

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ՌՈՒԲԵՆ ԲՈՒՆԻԱԹՅԱՆԻՆ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ՝

<i>նախագահությամբ՝ Բարձրագույն դատական խորհրդի նախագահ</i>	Կ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻ
<i>մասնակցությամբ՝ անդամներ</i>	Ա. ԱԹԱԲԵԿՅԱՆԻ Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻ Ե. ԹՈՒՄԱՆՅԱՆՑԻ Դ. ԽԱԶԱՏՈՒՐՅԱՆԻ Ն. ՀՈՎՍԵՓՅԱՆԻ Ք. ՄԿՈՅԱՆԻ Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆԻ Վ. ՔՈԶԱՐՅԱՆԻ
<i>Արդարադատության նախարարի տեղակալ</i>	Լ. ԲԱԼՅԱՆԻ
<i>Արդարադատության նախարարի ներկայացուցիչ</i>	Հ. ՍԱՆՈՅԱՆԻ
<i>քարտուղարությամբ՝</i>	Թ. ՂՈՒԿԱՍՅԱՆԻ

դռնբաց նիստում, քննության առնելով Արդարադատության նախարարի պարտականությունները կատարողի՝ «Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ռուբեն Բունիաթյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությամբ Բարձրագույն դատական խորհրդին դիմելու մասին» 2023 թվականի ապրիլի 19-ի թիվ 29-Ա որոշումը և կից ներկայացված փաստաթղթերը.

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

Կարգապահական վարույթ հարուցելու առիթ է հանդիսացել Արդարադատության նախարարին հասցեագրված և Արդարադատության նախարարությունում 09.02.2023 թվականին ստացված թիվ ԵԴ/25088/02/20 քաղաքացիական գործով (այսուհետ նաև՝ Գործ) հայցվոր Կարինե Պողոսյանի (այսուհետ նաև՝ Հայցվոր) հաղորդումը:

Արդարադատության նախարարի 24.02.2023 թվականի թիվ 14-Ա որոշմամբ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (այսուհետ նաև՝ Դատարան) դատավոր Ռուբեն Բունիաթյանի (այսուհետ նաև՝ Դատավոր) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ:

Արդարադատության նախարարի պարտականությունները կատարող Արմենուհի Հարությունյանի 19.04.2023 թվականի թիվ 29-Ա որոշմամբ միջնորդություն է ներկայացվել Բարձրագույն դատական խորհուրդ (այսուհետ նաև՝ Խորհուրդ)՝ Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

2. Վարույթ հարուցած մարմնի դիրքորոշումը

Արդարադատության նախարարի պարտականությունները կատարողը հայտնել է, որ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի, 63-րդ հոդվածի 1-ին մասի, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ նաև՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 8-րդ հոդվածի 1-ին մասի, 9-րդ հոդվածի 1-ին մասի, 11-րդ հոդվածի 6-րդ մասի, Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի, 179-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 17-րդ հոդվածի 7-րդ մասի, 5-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի, 115-րդ հոդվածի 2-րդ մասի, Վճարքեկ դատարանի թիվ ԿԴ/0412/02/18 քաղաքացիական գործով 30.05.2019 թվականին և թիվ ԵԴ/2029/02/19 քաղաքացիական գործով 23.02.2022 թվականին կայացրած որոշումներով արտահայտած դիրքորոշումների մեկնաբանություններից բխում է, որ դատարանը կրում է եզրափակիչ դատական ակտը հրապարակելու պարտականություն, որը կատարվում է դատական իշխանության պաշտոնական կայքում զետեղելու եղանակով և եզրափակիչ դատական ակտի օրինակը գործին մասնակցող անձանց տրամադրելու

պարտականություն, որը կատարվում է առձեռն հանձնելու կամ ուղարկելու եղանակով: Օրենսդիրը նշված պարտականությունների կատարման համար սահմանել է հստակ ժամկետներ: Մասնավորապես վճռի հրապարակումը պետք է կատարվի 15-օրյա ժամկետում, որի հաշվարկը սկսվում է դատարանի կողմից վճռի հրապարակման ժամանակը և վայրը հայտարարելու օրվան հաջորդող օրվանից:

Միաժամանակ նախատեսված է վճռի հրապարակման ժամկետը երկարաձգելու հնարավորություն, որի միակ հիմքը դատավորի առողջական վիճակի հետ կապված հանգամանքն է: Օրենսդիրը նշված հանգամանքին տալով բացառիկության հատկանիշ՝ հաջորդիվ բացահայտում է դրա պարտադիր հետևանքը, այն է՝ հայտարարված ժամկետում նշված հանգամանքով պայմանավորված դատարանի կողմից վճռի հրապարակման անհնարինությունը: Տվյալ դեպքում ևս վճռի հրապարակման ժամկետի երկարաձգումն ունի հստակ սահմաններ, այն է՝ երկարաձգման առավելագույն ժամկետը չի կարող գերազանցել 15 օրը: Իսկ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ դատարանի կողմից վճիռը գործին մասնակցող անձանց ինչպես հանձնելու, այնպես էլ ուղարկելու առավելագույն ժամկետը վճռի հրապարակման հաջորդ օրն է:

Վարույթ հարուցող մարմինը փաստել է, որ թե՛ վճիռը հրապարակելու, թե՛ դրա ժամկետը երկարաձգելու, թե՛ վճիռը գործին մասնակցող անձանց տրամադրելու համար սահմանված դատավարական ժամկետներն ունեն իմպերատիվ բնույթ և այդ ժամկետների հաղթահարման համար որևէ բացառություն կամ կառուցակարգ օրենսգրքով նախատեսված չէ: Այսպիսով՝ օրենսդրի կողմից սահմանվել են անհրաժեշտ ու բավարար կարգավորումներ՝ ուղղված դատական ակտը գործին մասնակցող անձանց կողմից ամբողջությամբ ու սեղմ ժամկետում ստանալուն, ինչը հանդիսանում է երաշխիք՝ նրանց կողմից դատական մատչելիության ու արդար դատաքննության իրենց իրավունքներն արդյունավետ իրացնելու համար:

Ավելին, եզրափակիչ դատական ակտի հրապարակման և դատական ակտը գործին մասնակցող անձանց տրամադրելու դատավարական իմպերատիվ ժամկետների սահմանումը պայմանավորված է անձի կողմից հայցադիմում ներկայացնելու միջոցով իր իրավունքների դատական պաշտպանությունը հնարավորինս սեղմ ժամկետներում ապահովելու անհրաժեշտությամբ: Ուստի անհրաժեշտ է դիտարկել դատարանի կողմից դատավարական ժամկետները պահպանելու պարտականությունն անձի՝ իր իրավունքների արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի և արդար դատաքննության իրավունքի տարր համարվող՝ իր գործի ողջամիտ ժամկետում քննության իրավունքի իրականացումն ապահովելու համատեքստում:

Իր իրավունքների արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի իրականացումը ենթադրում է, որ անձն իր իրավունքների պաշտպանության դատական կարգն ընտրում է՝ վստահելով իր մասնակցությամբ վեճի լուծումը դատարանին և ունենալով այն լեգիտիմ ակնկալիքը, որ դատարանը համապատասխան

ժամկետներում կքննի և կլուծի իր գործը: Այս իմաստով արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի հետ տրամաբանորեն կապված է արդար դատաքննության իրավունքի տարր համարվող՝ իր գործի ողջամիտ ժամկետում քննության իրավունքը: Հիմնարար այս իրավունքի բովանդակությանն անդրադարձել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ նաև՝ Եվրոպական դատարան) (տես՝ Cases of H. v. France, application no. 10073/82, 24/10/1989, and Katte Klitsche de la Grange v. Italy, application no. 12539/86, 27/10/1994, Stögmüller v. Austria (1602/62) գործով Եվրոպական դատարանի 10.11.1969 թվականի վճիռը, H. v. France (10073/82) գործով Եվրոպական դատարանի 24.10.1989 թվականի վճիռը), Սահմանադրական դատարանն իր 16.03.2021 թվականի թիվ ՍԴՈ-1585 որոշմամբ, ինչպես նաև Խորհուրդն իր մի շարք որոշումներով (տես՝ 02.04.2020 թվականի թիվ ԲԴԽ-6-Ո-Կ-3, 05.09.2020 թվականի թիվ ԲԴԽ-9-Ո-Կ-4, 20.12.2021 թվականի թիվ ԲԴԽ-101-Ո-Կ-27 որոշումներ):

Քննարկվող դեպքում Գործի փաստերի համաձայն՝ Դատարանը, Գործի քննությունը հայտարարելով ավարտված, վճռի հրապարակման օր է նշանակել 24.11.2021 թվականը: Գործի նյութերում առկա է 24.11.2021 թվականի ամսաթվով թվագրված վճիռը, որը, այնուամենայնիվ, Դատարանի կողմից դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակվել է միայն 05.02.2023 թվականին, այսինքն՝ հայտարարված ամսաթվից ավելի քան 1 տարի 2 ամիս անց:

Վճռի օրինակը Հայցվորին հանձնվել է 04.03.2023 թվականին (հիմք՝ պատվիրված նամակով, հանձնման մասին ծանուցման հավաստագիր, գծանիշ կոդ ALO108368725AM), այսինքն՝ վճռի հրապարակման ամսաթվից ավելի քան 1 տարի 3 ամիս անց, ինչից հետևում է, որ չի պահպանվել Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված վճռի օրինակը ոչ ուշ, քան դրա հրապարակման հաջորդ օրը գործին մասնակցող անձանց ուղարկելու օրենսդրի իմպերատիվ պահանջը, որպիսի պահպանումը նպատակ է հետապնդում նաև ապահովելու գործին մասնակցող անձի իրավունքների արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի տարր հանդիսացող՝ իր գործի ողջամիտ ժամկետում քննության իրավունքի իրականացումը:

Ինչ վերաբերում է դատավորի օգնական Արթուր Ավագյանի (այսուհետ նաև՝ Օգնական) կողմից կազմված թիվ ԴԴ-9.1-Ե-254692/21 համարի գրության (այսուհետ նաև՝ Գրություն) առկայությանը, ապա դրանով արձանագրվում է միայն Օգնականի կողմից այդպիսի Գրության կազմված լինելը, սակայն ոչ՝ վճռի օրինակը Հայցվորին (պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ) ուղարկված լինելու հանգամանքը:

Ամփոփելով Գործի՝ վերը ներկայացված հանգամանքները՝ վարույթ հարուցող մարմինն արձանագրել է, որ

1. Գործով կայացված վճիռը դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակվել է հայտարարված ժամկետից ավելի քան 1 տարի 2 ամիս հետո:

2. Գործով կայացված վճիռը փոստային եղանակով հայցվոր կողմին է հանձնվել սահմանված ժամկետից ավելի քան 1 տարի 3 ամիս հետո, իսկ պատասխանող կողմին վճիռը հանձնված լինելու (ուղարկվելու) հանգամանքի առնչությամբ տվյալներ ներկայացված չեն Դատավորի բացատրությամբ:

Հարուցված վարույթի փաստական հանգամանքների և վկայակոչված քաղաքացիադատավարական նորմերի համադրումից հետևում է, որ Գործով Դատավորի կողմից չեն պահպանվել եզրափակիչ դատական ակտը հրապարակելու, եզրափակիչ դատական ակտի օրինակը Հայցվորին ուղարկելու համար սահմանված ժամկետները: Դատարանի կողմից դատավարական ժամկետները չպահպանելու հետևանքով խախտվել է Հայցվորի իրավունքներից արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի, ինչպես նաև արդար դատաքննության իրավունքի տարր հանդիսացող՝ իր գործի ողջամիտ ժամկետում քննության իրավունքի իրականացումը: Մասնավորապես վճռի՝ որպես քաղաքացիական գործն ըստ էության լուծող դատական ակտի, բացակայության փաստով պայմանավորված, նկատի ունենալով, որ վճիռը հրապարակված չլինելու և Հայցվորին տրամադրված չլինելու հանգամանքը վերջինիս համար համարժեք է վճռի բացակայությանը, Գործի քննության և լուծման ժամկետը ձգձգվել է ավելի քան 1 տարի 2 ամիս տևողությամբ, այն դեպքում, երբ Դատարանի կողմից Գործի դատաքննությունն ավարտված է եղել:

Դատական ակտը շահագրգիռ կողմերին հասանելի չդարձնելու արդյունքում արդարադատության խաթարման խնդրին անդրադարձել է Խորհուրդը 22.09.2022 թվականի ԲԴԽ-72-Ո-Կ-17 որոշման շրջանակներում:

Արդյունքում, Դատարանի կողմից խախտվել են Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 7-րդ մասի, 179-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջները:

Դատավորի վարքագծի կանոններին վերաբերող Օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետից, 70-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետից հետևում է, որ ցանկացած դեպքում Դատավորը պարտավոր է իր գործունեությունն իրականացնել այնպես, որ բարձր պահի դատական իշխանության հեղինակությունը՝ թե՛ որպես անհատ, և թե՛ որպես արդարադատություն իրականացնող անձ՝ թույլ չտալով այնպիսի գործողություն կամ անգործություն, որոնք կարող են որևէ կերպ վարկաբեկել դատական իշխանությունը կամ հանրության ցանկացած անդամի մոտ ստեղծել այնպիսի տպավորություն, որը կարող է թյուր պատրանք ստեղծել կամ այլ կերպ բացասական ազդեցություն ունենալ դատական իշխանության անկախության և անաչառության վրա:

Դատավորի կողմից գործի ողջամիտ ժամկետում քննության իրականացման պահանջն իր ամրագրումն է ստացել ոչ միայն դատավարական օրենսգրքերում, այլ նաև՝ դատավորին ներկայացվող վարքագծի կանոններում՝ իրենից ներկայացնելով առանձնակի կարևորություն, քանի որ որոշ դեպքերում և պայմաններում, դրա խախտումը կարող է իր ազդեցությունն ունենալ դատական իշխանության հեղինակագրկման հարցում՝ հանգեցնելով դատական իշխանության նկատմամբ դատավարության մասնակիցների անվստահության ձևավորմանը, ինչպես նաև կարծիք

ստեղծել՝ իրեն վերաբերող վեճի լուծման շուրջ արդարադատություն իրականացնող մարմնի կողմից դրսևորվող անտարբերության տեսանկյունից:

Վկայակոչելով ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական խորհրդի 2006 թվականի թիվ 2006/23 բանաձևով հաստատված Դատավորների վարքագծի բանգալորյան սկզբունքների (այսուհետ՝ Բանգալորյան սկզբունքներ) 4-րդ, 6.5-րդ կետերը, Բանգալորյան սկզբունքների մեկնաբանությունները՝ վարույթ հարուցող մարմինը նշել է, որ յուրաքանչյուր դեպքում, երբ անձն ընտրում է իր իրավունքների պաշտպանության դատական կարգը՝ վստահելով իր մասնակցությամբ վեճի լուծումը դատարանին և ունենալով լեգիտիմ ակնկալիք, որ դատարանը հնարավորինս սեղմ ժամկետներում կքննի և կլուծի իր գործը, իսկ դատարանը չի պահպանում օրենքով սահմանված դատավարական ժամկետները (օրենքով սահմանված ողջամիտ ժամկետները), ապա նման վարքագիծը ոչ միայն հանգեցնում է առանց արդարադատության շահերին վնասելու՝ ողջամիտ ժամկետում և նվազագույն դատական ծախսերի կատարմամբ օրենքով իր իրավասությանը վերապահված հարցերը քննելու և լուծելու վարքագծի կանոնի, այլև դատական իշխանության անկախության և անաչառության վերաբերյալ հանրության վստահությունը նվազեցնող վարքագիծ դրսևորելուց զերծ մնալու վարքագծի կանոնի խախտման, քանի որ դատարանի կողմից գործի քննության և լուծման, ինչպես նաև գործով կայացված ակտը գործի մասնակցին մատչելի դարձնելը ձգձգելու արդյունքում անձի մոտ խարխիվում է դատական համակարգի և արդարադատության արդյունավետության նկատմամբ վստահությունը՝ հեղինակագրկելով դատական իշխանությունը:

Տվյալ դեպքում վերը վկայակոչված Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասով և 179-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավական նորմերի համադրված վերլուծությունից հետևում է, որ «վճռի հրապարակման» փուլը հաջորդում է դատաքննությունը եզրափակող «վճռի կայացման» փուլին, այսինքն՝ «վճռի հրապարակման փուլում» դատարանը հրապարակում է արդեն իսկ գոյություն ունեցող, կայացված վճիռը:

Քննարկվող դեպքում 24.11.2021 թվականի դրությամբ արդեն իսկ կայացված վճռի առկայության պայմաններում այն հրապարակելու, դրա օրինակը Հայցվորին ուղարկելու համար սահմանված ժամկետները Դատարանի կողմից էապես խախտելու հանգամանքը դիմումատուի, ինչպես նաև անկողմնակալ դիտորդի մոտ առաջացնում է ողջամիտ կասկած՝ Դատավորի կողմից առանց արդարադատության շահերին վնասելու՝ ողջամիտ ժամկետում օրենքով իր իրավասությանը վերապահված հարցերը քննելուն և լուծելուն ուղղված անհրաժեշտ շրջահայացություն և պատշաճ վարքագիծ ցուցաբերելու առնչությամբ: Դատարանի նման գործելակերպն ուղղակի ազդեցություն է ունենում դատարանի գործունեության արդյունավետության վրա, որն իր հերթին նվազեցնում է հանրության վստահությունն արդարադատության նկատմամբ և հեղինակագրկում դատական իշխանությունը:

Արդյունքում, Դատավորի կողմից Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 7-րդ մասի, 179-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի խախտումները՝ որպես հետևանք, հանգեցրել են նաև Օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 70-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով սահմանված վարքագծի կանոնների խախտման:

Օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 66-րդ հոդվածի 2-րդ մասի, 67-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորումներից հետևում է, որ օրենսդրի կողմից դատավորի վրա դրվել է վարքագծի բարձր չափորոշիչների արմատավորմանը մասնակցելու պարտականություն, որը վերջինս պետք է իրականացնի երկու եղանակով, այն է՝ դատավորի վարքագծի կանոններն անձամբ պահպանելով և դատարանի աշխատակազմի կողմից դրանց պահպանմանը հետամուտ լինելով: Այլ կերպ ասած, դատավորի կողմից դատավորի վարքագծի կանոնի խախտում է դիտարկվում այն դեպքը, երբ դատավորը պատշաճ հսկողություն չի իրականացնում իր աշխատակազմի (գործավար, օգնական) կողմից վարքագծի կանոնների պահպանման նկատմամբ: Վերը նշվածին անդրադարձել է նաև Խորհուրդն իր 14.02.2019 թվականի թիվ ԲԴԽ-8-Ո-Կ-04, 02.04.2020 թվականի թիվ ԲԴԽ-6-Ո-Կ-3 որոշումների շրջանակներում:

Այսպիսով՝ դատավորի օգնականի և գործավարի անմիջական ղեկավարը հանդիսանում է համապատասխան դատավորը, ուստի վերջիններիս վարքագծի նկատմամբ հսկողության իրականացումը և ծառայողական գործունեության իրականացման ընթացքում խախտումների, թերացումների կամ անգործության վերացումը համապատասխան դատավորի պարտականությունն է:

Վարույթ հարուցող մարմինը, վկայակոչելով Օրենսգրքի 142-րդ հոդվածի 1-ին, 5-րդ մասերը, նշել է, որ վարույթի փաստական հանգամանքների, Դատավորի բացատրության և կատարված իրավական վերլուծության համադրման արդյունքում Դատավորի կողմից դատավարական իրավունքի նորմերի խախտումը կատարվել է իր մեղավորությամբ, որը դրսևորվել է կոպիտ անփութությամբ, քանի որ Դատավորը չի գիտակցել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը՝ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 7-րդ մասով, 179-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված՝ վճիռը հայտարարված ժամկետում հրապարակելու, վճռի օրինակը գործին մասնակցող անձանց առձեռն հանձնվելու, իսկ դրա անհնարինության դեպքում հրապարակման հաջորդ օրը նրանց ուղարկվելու պահանջների խախտման հանգամանքը, թեև տվյալ իրադրությունում ակնհայտորեն կարող էր և պարտավոր էր ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ դատավարական ժամկետների պահպանմամբ իր վրա դրված պարտականությունները կատարելու համար՝ չգիտակցելով նաև, որ իր աշխատակազմի թերացումների կամ անգործության համար պատասխանատվություն է կրում հենց ինքը:

Վերոգրյալից հետևում է, որ սույն միջնորդությամբ ներկայացված՝ Դատավորի կողմից կոպիտ անփութությամբ դատավարական նորմերի խախտումներ կատարելու հետ միաժամանակ վերջինս կոպիտ անփութությամբ թույլ է տվել նաև դատավորի վարքագծի կանոնների խախտում՝ ի պաշտոնե գործելիս առանց արդարադատության շահերին վնասելու՝ ողջամիտ ժամկետում չքննելով և չլուծելով իր իրավասությանը վերապահված հարցերը և ցանկացած գործունեություն իրականացնելիս և բոլոր հանգամանքներում զերծ չմնալով դատական իշխանությունը վարկաբեկող, ինչպես նաև դատական իշխանության անկախության և անաչառության վերաբերյալ հանրության վստահությունը նվազեցնող վարքագիծ դրսևորելուց:

Ինչ վերաբերում է Դատավորի բացատրությամբ ներկայացված այն դիրքորոշմանը, որ Օգնականի կողմից ներկայացված վճռի նախագծի հիման վրա սահմանված ժամկետում Դատավորի կողմից կազմվել է դատական ակտը, որը հանձնվել է Օգնականին՝ հետագա գործողությունները կատարելու համար՝ հավելելով, որ Դատավորի գործառույթների մեջ ուղղակի չի մտնում առաքանի ուղարկելը, դատավարական փաստաթղթեր հանձնելը, ինչպես նաև www.datalex.am դատական տեղեկատվական համակարգում (այսուհետ նաև՝ Համակարգ) դատական ակտերը ներբեռնելը, այլ այդ ծառայողական պարտականությունները վերապահված են դատավորի աշխատակազմի համապատասխան դատական ծառայողին, ապա վարույթ հարուցող մարմինը նշել է, որ նման պայմաններում, հաշվի առնելով սույն միջնորդությամբ մեջբերված իրավական հիմքերը և դրանց շուրջ կատարված վերլուծությունները դատավորի օգնականի կամ գործավարի կողմից թույլ տրված անգործության, ինչպես նաև նրանց կողմից թույլ տրված բացթողումների կամ թերացումների պատասխանատուն են հանդիսանում ոչ միայն իրենք, այլ նաև վերջիններիս ղեկավարը՝ դատավորը, առավել ևս այն դեպքերում, երբ կատարվող աշխատանքներն անմիջականորեն կապված են այնպիսի գործողությունների հետ, որոնցով պայմանավորված են դատավարության մասնակիցների՝ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների պատշաճ և արդյունավետ իրացումը, մինչդեռ ինչպես նշվեց այս դեպքում, Հայցվորին հասցեագրված առաքանին (Գործով 24.11.2021 թվականի ամսաթվով թվագրված վճիռը) վերջինիս հանձնվել է 04.03.2023 թվականին, որն իր հերթին հանգեցրել է Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 7-րդ մասի, 179-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջների խախտման:

Այսպիսով, վերոնշյալը վկայում է, որ Դատավորի կողմից բացատրությամբ ներկայացված փաստարկները հիմնավոր չեն:

3. Դատավորի դիրքորոշումը հարուցված կարգապահական վարույթի վերաբերյալ

Դատավորը վարույթ հարուցող մարմինն ներկայացրած բացատրությամբ միջնորդել է կարճել կարգապահական վարույթը՝ հետևյալ հիմնավորումներով.

Ըստ Դատավորի՝ Գործով վճռի հրապարակման ժամանակ է հայտարարվել 24.11.2021 թվականը: Հայցվորը ներկայացրած հայցադիմումում որպես հաշվառման հասցե նշել է «ք. Երևան, Ավան, Նարեկացի թաղամաս 372. բն 41» հասցեն, իսկ որպես ծանուցման հասցե նշել է «ք. Երևան, Մաշտոցի պող., 2/4» հասցեն: Դատական ծանուցագրերը Հայցվորին ուղարկվել են «ք. Երևան, Մաշտոցի պող., 2/4» հասցեով, որոնք վերջինիս կողմից մինչև դատաքննություն նշանակելու մասին որոշում կայացնելը ստացվել են, իսկ դատաքննության նշանակելու մասին որոշումը չի ստացել, ծրարը փակ վիճակում վերադարձվել է «չպահանջված» նշումով: Հայցվորը որպես ներկայացուցիչ ներգրավել է Մարիամ Մկրտիչյանին, որին 19.05.2021 թվականին տրված լիազորագրում լիազորել է ստանալ նաև դատական ծանուցումներ և դատավարական

փաստաթղթեր:

Հայցվորի ներկայացուցիչ Մարիամ Մկրտիչյանը ստացել է դատաքննության նշանակելու մասին որոշումը, որից հետո մասնակցել է դատական նիստին: Գործով 24.11.2021 թվականի վճռով Հայցվորի ներկայացրած պահանջը մերժվել է: Հայցվորը 25.11.2021 թվականին զանգահարել և տեղեկացել է հայցը մերժված լինելու մասին: Վճիռը 26.11.2021 թվականին ելքագրվել է և ուղարկվել Հայցվորին (Հայցվորի ներկայացուցչի հասցեով): Դատավորի գործավարը Համակարգում վճիռը գեներացրել է 05.02.2023 թվականին:

Դատավորը նշել է, որ ելնելով աշխատանքային ծանրաբեռնվածությունից դիմում է ներկայացրել Խորհրդին՝ իր անուն-ազգանունը որոշակի ժամանակով գործերի բաշխման ցուցակից հանելու համար, սակայն Խորհուրդը մերժել է ներկայացված դիմումը:

Դատավորն Արդարադատության նախարարի ուշադրությունն է հրավիրել այն հանգամանքին, որ սահմանադրական ինստիտուտների (դատարան, դատական ծառայողներ, դատավոր, Խորհուրդ) կարգավիճակը և դատավորին պատասխանատվության ենթարկելու գործընթացները սուկ ընթացիկ օրենսդրության կարգավորումներով սահմանափակելն ինքնին կասկածահարույց և ոչ իրավաչափ կդառնա, եթե դրանով իսկ ստեղծվում են սահմանադրական ինստիտուտները շրջանցող, կամ որ ավելի վտանգավոր է, դրանց փոխարինող ստվերային ինստիտուտներ, ինչպիսին է, օրինակ «կարգապահական խախտում» սահմանադրաիրավական ինքնաբավ եզրույթի բովանդակության խեղաթյուրումը հետագա օրենսդրական կարգավորմամբ և դրա հիման վրա ձևավորված (ձևավորվող) իրավակիրառ պրակտիկայով:

Դատավորը նշել է, որ Օգնականի կողմից իրեն ներկայացվել է վճռի նախագիծ, որի հիման վրա սահմանված ժամկետում իր կողմից կազմվել է դատական ակտը, և հանձնվել է Օգնականին՝ վճռի ելքագրումն ապահովելու և օրենքով սահմանված ժամկետում կողմերին ուղարկելու համար: Դատավորը 27.02.2023 թվականին Հայցվորի կողմից ստացել է դիմում, որով տեղեկացել է, որ վերջինս վճիռը չի ստացել, իսկ Համակարգում այն տեղադրվել է 05.02.2023 թվականին:

Դատավորի ներկայացուցիչ Գնել Մուղնեցյանը 12.06.2023 թվականին Խորհրդին ներկայացրած դիրքորոշմամբ խնդրել է Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ ներկայացված միջնորդությունը մերժել:

Ըստ էության պնդելով Դատավորի կողմից վարույթ հարուցող մարմնին ներկայացված դիրքորոշումը՝ Դատավորի ներկայացուցիչը հավելել է, որ Արդարադատության նախարարի պարտականությունները կատարողի 19.04.2023 թվականի թիվ 29-Ա որոշման մեջ Դատավորին վերագրվել են այնպիսի «խախտումներ» թույլ տալու մեջ, որի համար պատասխանատվություն կրողը նա չէ:

Այս կապակցությամբ անհրաժեշտ է համարել, որպեսզի Խորհուրդը,

հանդիսանալով ընդհանրապես դատական իշխանության և մասնավորապես դատավորի սահմանադրաիրավական բարձր կարգավիճակի երաշխավոր, անդրադառնա և կայուն դիրքորոշում ձևավորի դատական ծառայողների և դատավորի մասնակցությամբ հարաբերությունների տարբերակման անհրաժեշտության վերաբերյալ: Նշված հարցին անդրադառնալն առնվազն կերաշխավորի, որպեսզի չստեղծվի դատավորին որպես սահմանադրական մարմինն պատասխանատվության ենթարկելու համար վտանգավոր նախադեպ՝ հետագայում ևս պատասխանատվության գործընթացի շրջանակներում սուբյեկտների (խախտման կազմերի) ոչ ճիշտ որոշման համար (ըստ էության օբյեկտիվ մեղսայնացման տիպիկ օրինակ):

Դատավորի ներկայացուցիչ Գնել Մուղնեցյանը նշել է, որ տվյալ պարագայում ուշադրություն է հրավիրում սույն գործով կարևոր իրողության վրա՝ բացառելու համար այլ սուբյեկտների համար պատասխանատվության ենթարկվելու հնարավորությունը:

Արդարադատության նախարարի պարտականությունները կատարողը 19.04.2023 թվականի թիվ 29-Ա որոշման մեջ վկայակոչել է Խորհրդի 14.02.2019 թվականի թիվ ԲԴԽ-8-Ո-Կ-04 որոշմամբ և 02.04.2020 թվականի թիվ ԲԴԽ-6-Ո-Կ-3 որոշմամբ հայտնած դիրքորոշումները և նշել, որ դատավորի օգնականի և գործավարի անմիջական ղեկավարը հանդիսանում է համապատասխան դատավորը, ուստի վերջիններիս վարքագծի նկատմամբ հսկողության իրականացումը և ծառայողական գործունեության իրականացման ընթացքում խախտումների, թերացումների կամ անգործության վերացումը համապատասխան դատավորի պարտականությունն է:

Սակայն անդրադառնալով վերը նշված դիրքորոշմանը՝ նշել է, որ ինչպես ցանկացած իրավախախտման բաղկացություն, այնպես էլ դատավորի կարգապահական խախտման բաղկացությունը բովանդակում է սուբյեկտիվ և օբյեկտիվ կողմեր:

Տվյալ դեպքում ըստ Արդարադատության նախարարի պարտականությունները կատարողի 19.04.2023 թվականի թիվ 29-Ա որոշման՝ Դատավորի արարքներում առկա են Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 7-րդ մասի, 179-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի առերևույթ խախտման հատկանիշներ, որոնք իրենց հերթին հանգեցրել են Օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 70-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով սահմանված դատավորի վարքագծի կանոնների առերևույթ խախտման:

Փաստորեն, Արդարադատության նախարարի 24.02.2023 թվականի թիվ 14-Ա որոշմամբ անդրադարձ չի եղել Դատավորի՝ որպես դատավորի օգնականի և գործավարի անմիջական ղեկավարի պարտականությունները չկատարելուն, այլ իրավախախտման օբյեկտիվ կողմը, այն է՝ դատավարական փաստաթուղթը (տվյալ դեպքում վճիռը) դատավարության մասնակցին ուշ ուղարկելը վերագրվել է անմիջապես դատավոր Ռուբեն Բունիաթյանին իբրև տվյալ իրավահարաբերության բովանդակությամբ պարտականություն ունեցող սուբյեկտի, այնինչ ինչպես ներկայացված բացատրության մեջ, թե սույն պատասխանում դատավոր Ռուբեն

Բունիությանը և ընդհանրապես ցանկացած դատավոր այդպիսի պարտականություն չունի, ինչ վերաբերում է դատավորի որպես դատավորի օգնականի և գործավարի անմիջական ղեկավարի պարտականություններին, ապա դրանց վերաբերյալ մինչև 19.04.2023 թվականի թիվ 29-Ա որոշումը կայացնելը որևէ անգամ չի վկայակոչվել:

Դատավորի ներկայացուցիչ Գնել Մուղնեցյանը նշել է, որ թիվ 29-Ա որոշմամբ Հայցվորի անբարեխղճության վերաբերյալ որևէ գնահատական առկա չէ: Որոշմամբ ընդամենը վկայակոչված են արդար դատաքննության իրավունքի տարր կազմող ողջամիտ ժամկետներում գործի քննության իրավունքի խախտման մասով Եվրոպական դատարանի վճիռներ, մինչդեռ Եվրոպական դատարանի իրավակիրառ պրակտիկայում ողջամիտ ժամկետներում գործի քննության իրավունքի խախտման համատեքստում կարևորվում է նաև դատավարության մասնակիցների պատշաճ վարքագիծը:

Սույն գործով հավաստվում է այն հանգամանքը, որ Հայցվորի հայցը մերժող եզրափակիչ դատական ակտը պատրաստ է եղել, դատավարության մասնակիցներին ուղարկելու նպատակով հանձնվել է դատարանի գրասենյակ, Համակարգում հրապարակված է եղել հայցի մերժման վերաբերյալ տեղեկատվությունը, Հայցվորը դատական ակտի հրապարակումից հետո զանգահարել և տեղեկացվել է իր հայցի մերժման մասին, սակայն այդ ամենից հետո որևէ քայլ չի ձեռնարկել հայցը մերժող դատական ակտը ստանալու կապակցությամբ: Ի տարբերություն հայցվոր կողմի՝ պատասխանողի ներկայացուցիչը դիմել է Դատարանին և ստացել դատական ակտը, ինչով նույնպես հավաստվում է այն հանգամանքը, որ գործով եզրափակիչ դատական ակտը Դատավորի կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ժամանակին կայացվել է:

Ամբողջության մեջ դիտարկելով հայցվոր Կարինե Պողոսյանի կողմից դրսևորած անգործությունը (պասիվ վարքագիծը), որպես վարույթի կողմ իր շահերի պաշտպանության համար օրենսդրությամբ տրամադրված միջոցներից և գործիքներից 14 ամիս համառորեն չօգտվելու դիտավորությունը, այն, որ առկա բացթողումը հայտնաբերվել է նախքան Կարինե Պողոսյանի կողմից դիմում ստանալը և կարգապահական վարույթի հարուցումը, որպես ելակետ ունենալով, որ ենթադրյալ թույլ տրված խախտումը կատարվել է ոչ թե դատավոր Ռուբեն Բունիությանի, այլ վերջինիս աշխատակազմի կողմից, Դատավորի ներկայացուցիչը խնդրել է մերժել Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ միջնորդությունը:

4. Հարուցված կարգապահական վարույթի համար էական նշանակություն ունեցող հանգամանքները

1) Կարինե Պողոսյանը 20.08.2020 թվականին հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ ՀՀ փաստաբանների պալատի՝ որոշումը մասնակի անվավեր ճանաչելու (վերացնելու) և որպես հետևանք՝ որակավորման քննությունը հանձնած համարելու և վկայագիր հանձնել պարտավորեցնելու մասին, որը Դատարանի 31.08.2020 թվականի որոշմամբ վերադարձվել է (քաղաքացիական գործին շնորհվել է

թիվ ԵԴ/25088/02/20 համարը):

2) Հայցվորի կողմից կրկին ներկայացված հայցադիմումը Դատարանի 28.09.2020 թվականի որոշմամբ ընդունվել է վարույթ և 09.04.2021 թվականի որոշմամբ նշանակվել է նախնական դատական նիստ:

3) Գործով դատական նիստեր են անցկացվել 19.05.2021, 15.07.2021 թվականներին և Դատարանի 15.07.2021 թվականի որոշմամբ Գործով դատաքննությունը նշանակվել է 09.11.2021 թվականին:

4) Դատական ակտի հրապարակման օր է նշանակվել 24.11.2021 թվականը:

5) Դատարանի 24.11.2021 թվականի ամսաթվով թվագրված վճռով հայցը մերժվել է:

6) «www.datalex.am» դատական տեղեկատվական համակարգում 24.11.2021 թվականը նշվել է որպես վճռի հրապարակման օր:

7) Դատարանի կողմից Գործով կայացված 24.11.2021 թվականի վճիռը Համակարգում տեղադրվել է 05.02.2023 թվականին (ստեղծման ամսաթիվ: 2023-02-05 23:43:17):

8) Դատավորի բացատրությանը կից ներկայացվել է վճռի օրինակի պատճենը, որի վրա պատասխանողի ներկայացուցիչ Մ. Կարապետյանը կատարել է ձեռագիր գրառում՝ հետևյալ բովանդակությամբ. «Ստացա վճիռը, ՀՀ ՓՊ ներկայացուցիչ Մ. Կարապետյան 22.12.2021թ.» և ստորագրություն:

9) Գործի նյութերում առկա է վճռի օրինակը, ինչպես նաև վճռի օրինակի պատճենը, որի վրա առկա է նշում՝ պատասխանողի ներկայացուցիչ Մ. Կարապետյանի կողմից այն 22.12.2021 թվականին ստանալու մասին:

10) Գործում առկա է Դատավորի օգնականի կողմից 26.11.2021 թվականի ամսաթվով կազմված թիվ ԴԴ-9.1-Ե-254692/21 համարի գրություն՝ հասցեագրված Հայցվորի ներկայացուցիչ նշված Մարիամ Մկրտիչյանին «ք. Երևան, Սունդուկյան փող., 26, բն. 16» հասցեով՝ հետևյալ բովանդակությամբ. «Ուղարկվում է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԴ/25088/02/20 քաղաքացիական գործով կայացված վճիռը»:

11) Հայցվորը 26.02.2023 թվականին Դատավորին հասցեագրած և 27.02.2023 թվականին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի «Արաբկիր» նստավայրում թիվ Մ-20711/23 համարով մուտքագրած դիմումով հայտնել է, որ Գործով վճռի հրապարակման օր է սահմանվել 24.11.2021 թվականը, այն Համակարգում տեղադրվել է 05.02.2023 թվականին (ամսաթիվ՝ 2023-02-05 23:43:17), ինչի մասին տեղեկացել է 26.02.2023 թվականին: Նշել է, որ վճռի օրինակը մինչ 27.02.2023 թվականն իրեն չի ուղարկվել (առձեռն չի հանձնվել): Խնդրել է Գործով վճիռն իրեն ուղարկել «ք. Երևան, 0060, Նարեկացի թաղ. 37 շենք, բն. 41» հասցեով:

12) Օգնականի կողմից կազմված «11.2021»¹ թվականի ամսաթվով թվագրված գրության համաձայն՝ Գործով կայացված վճիռն ուղարկվել է Հայցվորին՝ «ք. Երևան, Նարեկացի թաղ. 37 շենք, բնակարան 41» հասցեով:

13) «ք. Երևան, Նարեկացի թաղ. 37 շենք, բնակարան 41» հասցեով Հայցվորին հասցեագրված առաքանին (գծանիշ կոդ՝ ALO108368725AM) վերջինիս հանձնվել է 04.03.2023 թվականին:

14) Ի պատասխան Դատական դեպարտամենտի ղեկավարի պաշտոնակատար Նաիրի Գալստյանի 01.06.2023 թվականի «Հայփոստ» ՓԲԸ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արայիկ Աբրահամյանին հասցեագրված թիվ ԴԴ-1ԴԴ/936-23 Ե-4255 հարցման՝ վերջինս 06.06.2023 թվականի թիվ ԵԼ-ՀՓ 3049-23 գրությամբ պատասխանել է հետևյալը. « (...) տեղեկացնում եմք, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի «Արաբկիր» նստավայրից 26.11.2021թ. թիվ ԴԴ-9.1-Ե-254692/21 գրությամբ Մարիամ Մկրտիչյանին և ՀՀ փաստաբանների պալատին հասցեագրված փոստային առաքանիների վերաբերյալ «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից իրականացվել են ուսումնասիրություններ: Ուսումնասիրությունների արդյունքում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի «Արաբկիր» նստավայրի դատավոր Ռուբեն Բունիաթյանի կողմից 01.11.2021թ.-ից մինչև 28.12.2021թ.-ը ուղարկված առաքանիների Հաշվեցուցակներով Մարիամ Մկրտիչյանին և ՀՀ փաստաբանների պալատին հասցեագրված առաքանիներ չեն հայտնաբերվել: «Հայփոստ» ՓԲԸ կողմից միաժամանակ ուսումնասիրվել են Մարիամ Մկրտիչյանի՝ ք.Երևան, Սունդուկյան փող.26, բն. 16 հասցեն սպասարկող Երևանի թիվ 0012 փոստային բաժանմունքի առաքանիների հանձնման ցուցակները 26.11.2021թ.-ից մինչև 29.12.2021թ. ընկած ժամանակահատվածի առաքանիների հանձման ցուցակները, որոնց համաձայն նշված ժամանակահատվածում Մարիամ Մկրտիչյանի անվամբ փոստային առաքանիներ չեն ստացվել: Ստուգվել են նաև մեծաքանակ առաքանիների վերաբերյալ ծրագրում առկա տեղեկությունները, որոնցում նույնպես բացակայում են Մարիամ Մկրտիչյանին և ՀՀ փաստաբանների պալատին դատարանի կողմից հասցեագրված առաքանիների վերաբերյալ տեղեկություններ:»:

5. Հարուցված կարգապահական վարույթի շրջանակներում էական նշանակություն ունեցող իրավական հարցադրումները

Հաշվի առնելով Արդարադատության նախարարի պարտականությունները կատարողի կողմից միջնորդությամբ բերված փաստարկներն ու հիմնավորումները և դրանց դեմ Դատավորի և նրա ներկայացուցչի կողմից ներկայացված դիրքորոշումը՝ Խորհուրդը Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու

¹ Հայցվորին՝ ք. Երևան, Նարեկացի թաղ., 37 շենք, բնակարան 41 հասցեով ուղարկված գրության ամսաթիվը թերի է նշված:

վերաբերյալ հարցը լուծելու համար էական է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

5.1 արդյո՞ք թիվ ԵԴ/25088/02/20 քաղաքացիական գործով Դատավորի կողմից թույլ է տրվել դատավարական իրավունքի նորմի (նորմերի) խախտում,

5.2 արդյո՞ք թիվ ԵԴ/25088/02/20 քաղաքացիական գործով Դատավորի կողմից թույլ տրված դատավարական իրավունքի նորմի (նորմերի) խախտումները հանգեցրել են դատավորի վարքագծի կանոնի խախտման,

5.3 եթե Դատավորի կողմից թույլ են տրվել դատավարական իրավունքի նորմի (նորմերի) և (կամ) դատավորի վարքագծի կանոնների խախտումներ, ապա արդյո՞ք դրանք կատարվել են դիտարկությամբ, թե՛ կոպիտ անփութությամբ:

6. Խորհրդի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննարկելով Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը, լսելով Արդարադատության նախարարի պարտականությունները կատարողի հաղորդումը, ինչպես նաև վերջինիս ներկայացուցիչների դիրքորոշումները, Դատավորի և նրա ներկայացուցչի դիրքորոշումը, ուսումնասիրելով կարգապահական վարույթի նյութերը և հետազոտելով ապացույցները՝ Խորհուրդը գտնում է, որ ներկայացված միջնորդությունը ենթակա է բավարարման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Խորհուրդն արձանագրում է, որ վարույթ հարուցող մարմնի կողմից կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին միջնորդության հիման վրա Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննության է առնում Օրենսգրքի 152-րդ հոդվածում ամրագրված դրույթի պահանջներին համապատասխան, այն է՝ «Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությունը Բարձրագույն դատական խորհրդում կատարվում է միայն դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելու համար միջնորդություն ներկայացնելու մասին որոշմամբ նշված կարգապահական խախտման սահմաններում»: Այդ կապակցությամբ Բարձրագույն դատական խորհրդի իրավական հետազոտման առարկան սահմանափակվում է միջնորդությամբ ներկայացված հիմքերի և հիմնավորումների շրջանակներում:

Օրենսգրքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝

1) արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտումը, որը կատարվել է դիտարկությամբ կամ կոպիտ անփութությամբ.

2) դատավորի կողմից սույն օրենսգրքով սահմանված՝ դատավորի վարքագծի կանոնները խախտելը, բացառությամբ սույն օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով սահմանված կանոնի, որը կատարվել է դիտարկությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Խորհուրդը հարկ է համարում արձանագրել, որ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 143-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայության ապացուցման պարտականությունը կրում է կարգապահական վարույթը հարուցած մարմինը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կարգապահական խախտման համար դատավորը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ սույն օրենսգրքով սահմանված կարգով՝ Բարձրագույն դատական խորհրդի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշմամբ: Դատավորի կողմից կատարված կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են դատավորի օգտին:

Վերը նշված հոդվածի մեկնաբանությունից բխում է, որ տվյալ դեպքում վարույթ հարուցող մարմինն է կրում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի առկայությունն ապացուցելու պարտականությունը: Վարույթն իրականացնող մարմնի կողմից պետք է ձեռք բերվեն բավարար ապացույցներ, որոնք իրենց համակցության մեջ բավարար կլինեն Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար և կհաստատեն վերջինիս մեղքը: Այսինքն, գործով ձեռք բերված ապացույցների ոչ բավարար լինելու, դրանց հակասականության կամ բացակայության պայմաններում վարույթ հարուցող մարմինը պետք է կրի այդ պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու բոլոր անբարենպաստ հետևանքները:

Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք, իսկ 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: (...):

Օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանների գործունեությունը պետք է կազմակերպվի այնպես, որ ապահովվի յուրաքանչյուրի իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանությունը՝ օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության միջոցով:

Օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի քննությունը և լուծումը պետք է իրականացվեն ողջամիտ ժամկետում: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե գործի քննության և լուծման համար օրենքով սահմանված է հատուկ ժամկետ, ապա

այն պետք է քննվի և լուծվի այդ ժամկետում: Նման ժամկետի երկարաձգումը թույլատրվում է բացառապես օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

Սահմանադրական դատարանը թիվ ՍԴԴ-1585 որոշմամբ արձանագրել է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելու պահանջն արդար դատաքննության իրավունքի անկյունաքարերից մեկն է, և դրա խախտումը կարող է խաթարել արդարադատության բուն էությունը, ուղղակիորեն վտանգել արդարադատության իրականացման ողջ գործընթացի արդյունավետությունը և կասկածի տակ դնել այդ գործընթացի վստահելիությունը: Միջազգայնորեն ընդունված է այն մոտեցումը, համաձայն որի՝ «ուշացած արդարադատությունը հավասար է մերժված արդարադատության» (օրինակ՝ ECHR, Cases of Vazagashvili and Shanava v. Georgia, application no. 50375/07, 18/07/2019, and Lopatin and Medvedskiy v. Ukraine, applications nos. 2278/03 and 6222/03, 20/05/2010), քանի որ գործի քննության անհարկի ձգձգումները, նույնիսկ անկախ գործի ելքից, անարդյունավետ են դարձնում մարդու իրավունքների պաշտպանությունը:

Սահմանադրական դատարանն արձանագրել է նաև, որ գործի քննության ողջամիտ ժամկետը չունի ընդհանուր, բոլոր իրավիճակների համար կիրառելի թվային արտահայտություն. այն ենթակա է գնահատման յուրաքանչյուր դեպքում՝ հաշվի առնելով կոնկրետ գործի հանգամանքները: Ընդ որում, Սահմանադրության 81-րդ հոդվածի ուժով անձի արդար դատաքննության իրավունքը և դրա բաղադրատարր հանդիսացող՝ ողջամիտ ժամկետում գործի քննության պահանջը մեկնաբանելիս պետք է հաշվի առնվի և կիրառվի, ի թիվս այլնի, նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ձևավորած պրակտիկան:

Եվրոպական դատարանը բազմիցս անդրադարձել է գործի քննությունը ողջամիտ ժամկետում իրականացնելու պահանջի բովանդակությանը՝ ընդգծելով նաև այդ պահանջի կարևորությունը: Վերջինս, մասնավորապես, նշել է, որ պահանջելով գործերի քննություն «ողջամիտ ժամկետում»՝ Կոնվենցիան ընդգծում է այն հանգամանքը, որ արդարադատությունը չպետք է իրականացվի այնպիսի ձգձգումներով, որոնք կարող են վտանգել դրա արդյունավետությունն ու վստահելիությունը (Cases of H. v. France, application no. 10073/82, 24/10/1989, and Katte Klitsche de la Grange v. Italy, application no. 12539/86, 27/10/1994):

Եվրոպական դատարանն անդրադառնալով բողոքարկման իրավունքի և դրա իրացման պայմաններին, արձանագրել է. «(...) բողոք ներկայացնելու իրավունքը պետք է իրացվի այն պահից սկսած, երբ համապատասխան անձը ձեռք է բերել իրական հնարավորություն ծանոթանալու դատարանի որոշման հետ, որը շոշափում է նրա իրավունքները կամ օրինական շահերը, կամ նրա համար առաջացնում է որոշակի հետևանքներ: Հակառակ դեպքում, դատարանները կստանային հնարավորություն դատական ակտերի կայացման մասին անձանց ուշացմամբ ծանուցելով էապես սահմանափակել անձանց կողմից բողոք բերելու իրավունքը, անգամ՝ բացառել այդ հնարավորությունը: Դատական ծանուցումները համարվում են միջոց դատարանի և դատավարության մասնակիցների միջև փոխազդեցություն ստեղծելու համար և ուղղված

են դատավարության մասնակիցներին կայացված ակտերի մասին տեղեկացնելուն, ինչպես նաև նրանց՝ այդ ակտերը բողոքարկելու հնարավորություն տալուն: Կոնվենցիայի 6-րդ հոդվածը չի սահմանում դատական ակտերի հանձնման կոնկրետ եղանակ, ինչպես, օրինակ, պատվիրված նամակով ուղարկելն է: Սակայն միաժամանակ դատարանի որոշումն անձին պետք է հանձնված լինի այնպիսի եղանակով, որը հնարավորություն կտա ստուգել ինչպես դատական ակտը փոխանցված լինելու հանգամանքը, այնպես էլ այն հանձնելու ստույգ օրը (տե՛ս, Ivanova and Ivashova v. Russia գործով Եվրոպական դատարանի 26.04.2017 թվականի վճիռը, կետեր 41, 45-46):»

Դատարանի մատչելիության իրավունքի դրսևորումներից է համարվում կայացված որոշումների մասին պատշաճ ծանուցում ստանալու իրավունքը, մասնավորապես այն դեպքերում, երբ բողոք բերելու իրավունքը սահմանափակված է որոշակի ժամկետներով (տե՛ս, Zavodnik v. Sloveńie գործով Եվրոպական դատարանի 21.08.2015 թվականի վճիռը, կետ 71):

Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ դատարանի՝ եզրափակիչ, իսկ սույն օրենսգրքով կամ Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ նախատեսված դեպքերում նաև այլ դատական ակտերը հրապարակվում են դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:

Գործի քննության պահին գործող խմբագրությամբ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 179-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճիռը սույն օրենսգրքով սահմանված կարգով հրապարակվում է գործի քննությունն ավարտելուց հետո՝ 15 օրվա ընթացքում, եթե օրենքով վճռի հրապարակման համար ավելի կարճ ժամկետ սահմանված չէ: Բացառիկ դեպքերում, երբ առկա են դատավորի առողջական վիճակի հետ կապված հարգելի հանգամանքներ, որոնք անհնար են դարձնում հայտարարված ժամկետում վճռի հրապարակումը, դատարանը կարող է մինչև 15 օրով երկարաձգել վճռի հրապարակման ժամանակը՝ այդ մասին ծանուցելով գործին մասնակցող անձանց:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վճռի օրինակը ոչ ուշ, քան դրա հրապարակման հաջորդ օրն ուղարկվում է գործին մասնակցող անձանց, եթե մինչ այդ առձեռն նրանց չի հանձնվել:

Վճռաբեկ դատարանն իր 03.03.2022 թվականի թիվ ՇԴ3/0845/02/19 որոշմամբ արձանագրել է. «(...) Ներպետական օրենսդրությամբ դատական ակտը հրապարակելու, գործին մասնակցող անձանց հանձնելու և նրանց ուղարկելու ընթացակարգեր սահմանելով՝ օրենսդիրը նպատակ է հետապնդում այդ միջոցներով ստեղծել բավարար հիմքեր և երաշխիքներ, որպեսզի անձինք կարողանան անխաթար կերպով օգտվելու իրենց դատական պաշտպանության իրավունքից: Ուստի ելնելով այդ նպատակներից՝ դատավարական նորմերով սահմանված՝ դատական ակտը հրապարակելու և գործին մասնակցող անձանց հանձնելու կամ նրանց ուղարկելու ընթացակարգերը պետք է ուղղված լինեն պաշտպանության միջոցներն ավելի հասանելի

դարձնելուն, այլ ոչ դրանք ոչ իրավաչափորեն սահմանափակելուն: ՀՀ վճռաբեկ դատարանը, ամփոփելով Եվրոպական դատարանի որոշումներում արտահայտված դիրքորոշումները, եզրահանգել է, որ թեև Կոնվենցիայի 6-րդ հոդվածը հստակ չի սահմանում, թե դատարանի կայացրած ակտն ինչ կերպով պետք է հանձնվի անձին, սակայն միանշանակ է այն, որ դատական ակտը պետք է հանձնվի այնպիսի եղանակով, որը հնարավորություն կտա իրապես պարզելու ինչպես դատական ակտի՝ փոխանցված լինելու հանգամանքը, այնպես էլ այն հանձնելու սրույգ օրը: Դատական ակտի հանձնման կոնկրետ եղանակ չսահմանելով հանդերձ՝ Կոնվենցիան և դրա կիրառումը պահանջում են, որպեսզի անձի բողոքարկման իրավունքի իրացումը սերտորեն փոխկապակցված լինի դատարանի կայացրած ակտին ծանոթանալու իրական հնարավորության հետ: Այսինքն՝ դատավարական նորմերը պետք է սահմանվեն այնպես, որպեսզի գործին մասնակցող անձանց համար իրական հնարավորություն ապահովեն փրկապետելու դատական ակտի բովանդակությանը, և չարդարացված կերպով չսահմանափակվի նրանց բողոք բերելու իրավունքը: Դրա հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ հանդիսանալով դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքների բաղադրարարներից մեկը՝ բողոքարկման իրավունքը կարող է սահմանափակվել պետության կողմից, սակայն այդ սահմանափակումները՝ ներառյալ ժամկետայինները, չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը:»:

Խորհուրդը հարկ է համարում արձանագրել, որ օրենսդրի կողմից դատավարական ժամկետի նախատեսումն ինքնանպատակ չէ. ժամկետ նախատեսելով օրենսդիրը հետապնդում է իրավաչափ նպատակ, այն է՝ երաշխավորել տվյալ իրավահարաբերության մասնակիցների իրավունքների և ազատությունների պաշտպանությունը, ապահովել իրավահարաբերությունների կայունությունը, որոշակիությունը, ինչպես նաև կանխել և բացառել «կամայականության վտանգ»-ը՝ տալով համապատասխան սուբյեկտներին իրենց վարքագիծն օրենքի պահանջներին համապատասխանեցնելու գործնական հնարավորություն: Դատավարական ժամկետների գլխավոր առանձնահատկությունն այն է, որ դրանք սահմանում են հենց դատավարական գործողության իրականացման ժամանակահատվածը (պահերը): Միաժամանակ դատավարական ժամկետները նպաստում են դատական քաջքուկի բացառմանը, դատավարական իրավահարաբերությունների կայունությանը, հստակությանն ու որոշակիությանը, որոնք վերջին հաշվով ապահովում են դատարան դիմող քաղաքացիների և կազմակերպությունների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն ու երաշխավորվածությունը, մի խոսքով՝ արդարադատության իրականացման արդյունավետությունը:

Խորհուրդն արձանագրում է, որ եթե օրենքով սահմանված են հստակ ժամկետներ, ապա դրանց պահպանումը բխում է օրինականության սկզբունքից և յուրաքանչյուր դեպքում օրենքով սահմանված ժամկետներին վերաբերող պայմանները կրում են

իմպերատիվ բնույթ, քանի որ նշված ժամկետում ակնկալվող արդյունքից է կախված դատավարության յուրաքանչյուր մասնակցի համար հնարավոր իրավական հետևանքի առաջացումը, որը կարող է դրսևորվել ՀՀ քաղաքացիադատավարական օրենսդրությամբ որպես արդար դատաքննության իրավունքի դատական պաշտպանության հիմնական ձև ամրագրված դատական ակտի բողոքարկմամբ կամ չբողոքարկելու արդյունքում օրինական ուժի մեջ մտնելով:

Միաժամանակ օրենսդիրը Գործի քննության պահին գործող Քաղաքացիական դատավարության օրենսգրքի իրավակարգավորումներով սահմանել է դատական ակտի հրապարակումը մինչև 15 օրով երկարաձգելու հնարավորություն այն դեպքի համար, երբ առկա են դատավորի առողջական վիճակի հետ կապված հարգելի հանգամանքներ, որոնք անհնար են դարձնում հայտարարված ժամկետում վճռի հրապարակումը, այսինքն՝ բացառապես նշված հանգամանքի առկայությունը կարող է հարգելի դարձնել դատական ակտի հրապարակման ժամկետի ուշացումը, այն էլ առավելագույնը 15 օրով:

Քննարկվող պարագայում Դատարանը 09.11.2021 թվականին կայացած նիստում հայտարարել է Գործի քննությունն ավարտված և վճռի հրապարակման օր է նշանակել 24.11.2021 թվականը, մինչդեռ նշված օրը վճիռը Համակարգում չի հրապարակվել, այլ հրապարակվել է օրենքով սահմանված ժամկետից 1 տարի 2 ամիս անց, այն է՝ 05.02.2023 թվականին:

Թեև Գործում առկա է Օգնականի կողմից 26.11.2021 թվականի ամսաթվով կազմված թիվ ԴԴ-9.1-Ե-254692/21 համարի գրությունը՝ Գործով վճիռը Հայցվորի ներկայացուցիչ Մարիամ Մկրտիչյանին ուղարկելու վերաբերյալ, սակայն վճիռը Հայցվորին կամ նրա ներկայացուցչին օրենքով սահմանված ժամկետում ուղարկված լինելու վերաբերյալ ապացույց գործում առկա չէ: Ավելին, Խորհուրդը հարկ է համարում փաստել, որ «Հայփոստ» ՓԲԸ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արայիկ Աբրահամյանը 06.06.2023 թվականի թիվ ԵԼ-ՀՓ 3049-23 գրությամբ հայտնել է, որ «(...) Ուսումնասիրությունների արդյունքում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի «Արաբկիր» նստավայրի դատավոր Ռուբեն Բունիաթյանի կողմից 01.11.2021թ.-ից մինչև 28.12.2021թ.-ը ուղարկված առաքանիների Հաշվեցուցակներով Մարիամ Մկրտիչյանին և ՀՀ փաստաբանների պալատին հասցեագրված առաքանիներ չեն հայտնաբերվել: «Հայփոստ» ՓԲԸ կողմից միաժամանակ ուսումնասիրվել են Մարիամ Մկրտիչյանի՝ ք.Երևան, Սունդուկյան փող. 26, բն. 16 հասցեն սպասարկող Երևանի թիվ 0012 փոստային բաժանմունքի առաքանիների հանձնման ցուցակները 26.11.2021թ.-ից մինչև 29.12.2021թ. ընկած ժամանակահատվածի առաքանիների հանձնման ցուցակները, որոնց համաձայն նշված ժամանակահատվածում Մարիամ Մկրտիչյանի անվամբ փոստային առաքանիներ չեն ստացվել: Ստուգվել են նաև մեծաքանակ առաքանիների վերաբերյալ ծրագրում առկա տեղեկությունները, որոնցում նույնպես բացակայում են Մարիամ Մկրտիչյանին և ՀՀ

փաստաբանների պալատին դատարանի կողմից հասցեագրված առաքանիների վերաբերյալ տեղեկություններ:»:

Ընդ որում, Հայցվորի կողմից 26.02.2023 թվականին Դատավորին հասցեագրվել և 27.02.2023 թվականին Դատարանի «Արաբկիր» նստավայրում մուտքագրվել է դիմում՝ վճռի օրինակը մինչ 27.02.2023 թվականն իրեն ուղարկված չլինելու և վճիռն իր կողմից նշված հասցեով ուղարկելու մասին: Միաժամանակ Գործում առկա է Օգնականի կողմից կազմված «11.2021»² թվականի ամսաթվով թվագրված գրություն (առանց ելքագրման տվյալների)՝ Գործով վճիռը Հայցվորի կողմից նշված հասցեով ուղարկելու մասին, ինչպես նաև Հայցվորի կողմից վճիռը 04.03.2023 թվականին ստացած լինելու վերաբերյալ հավաստագիր:

Խորհուրդը, ինչպես նախկինում, սույն որոշմամբ ևս արձանագրում է, որ դատավարական ժամկետների ողջամիտ խախտումները մեղքի հիմնավորման կամ դրանց հետևանքների կարևորության աստիճանը գնահատելու տեսանկյունից կարող են արդարացվել միայն բացառիկ, դատավարության մասնակիցների հիմնարար իրավունքների պաշտպանության կամ երաշխավորման անհրաժեշտությամբ, այսինքն՝ այնպիսի իրավիճակներում, երբ դատարանները կհիմնավորեն, որ դատավարական ժամկետների խախտման արդյունքում պաշտպանվել է առավել կարևոր շահ կամ պայմանավորված լինեն դատավարության մասնակիցների վարքագծով:

Նման պայմաններում Խորհուրդը հարկ է համարում արձանագրել, որ անաչառ դիտորդի մոտ հնարավոր է ծագի ողջամիտ կասկած առ այն, որ Դատարանը կայացված դատական ակտն օրենքով սահմանված ժամկետում հրապարակելու և դատավարության բոլոր մասնակիցներին ուղարկելու իր գործողություններում չի դրսևորել պատշաճ ջանասիրություն:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածը և Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասը, արդար դատաքննության իրավունքի բովանդակության մեջ առանձնացնելով ողջամիտ ժամկետներում գործի քննության իրավունքը, պետության համար իրավական համակարգում այն ապահովելու ուղղակի պարտականություն են սահմանում: Ողջամիտ ժամկետներում գործի քննության իրավունքը, հանդիսանալով արդար դատաքննության իրավունքի ֆունկցիոնալ տարր, նպատակ ունի շահագրգիռ անձին պաշտպանել երկարատև անորոշ վիճակից և ապահովել արդարադատության իրականացումն առանց ձգձգումների, ինչը կարող է վտանգել գործի քննության արդյունավետությունն ու վստահելիությունը:

Վերը նշվածի հաշվառմամբ Խորհուրդը փաստում է, որ Դատավորը, վճիռը հրապարակման հայտարարված օրվանից մոտ 1 տարի 2 ամիս հետո հրապարակելով, ինչպես նաև վճռի օրինակը Հայցվորին օրենքով սահմանված ժամկետում չուղարկելով, չի դրսևորել պատշաճ ջանասիրություն, ինչի արդյունքում վերջինիս կողմից թույլ է տրվել

² Հայցվորին՝ ք. Երևան, Նարեկացի թաղ., 37 շենք, բնակարան 41 հասցեով ուղարկված գրության ամսաթիվը թերի է նշված:

Քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված իրավանորմերի խախտում:

Միաժամանակ Խորհուրդն անդրադառնալով Դատավորի ներկայացուցչի կողմից դիրքորոշմամբ ներկայացված այն փաստարկին, որ Դատավորին վերագրվել են այնպիսի «խախտումներ» թույլ տալու մեջ, որի համար պատասխանատվություն կրողը նա չէ, այսինքն ենթադրյալ թույլ տրված խախտումը կատարվել է ոչ թե դատավոր Ռուբեն Բունիայանի, այլ վերջինիս աշխատակազմի կողմից, ապա Բարձրագույն դատական խորհուրդն իր 02.04.2020 թվականի թիվ ԲԴԽ-6-Ո-Կ-3 որոշմամբ արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ «...դատավորի պարտականությունն է ապահովել գործը ողջամիտ ժամկետում քննության օրենսդրական պահանջը, ուստի դատավարության մասնակիցներին պատշաճ ծանուցելու առումով իր աշխատակազմի թերացումների կամ անգործության համար պատասխանատվությունը կրում է դատավորը: Եվ Դատավորի այն պատճառաբանությունը, որ ծանուցագրերը կողմերին պատշաճ չուղարկելու և «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում լրացումներ չկատարելու համար պատասխանատվությունը կրում է վերջինիս աշխատակազմը, չի կարող դիտվել որպես հիմնավոր բացատրություն, քանի որ օրենսդրի կողմից դատարանների վրա է դրված անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների ապահովմանն ուղղված օրենսդրական բոլոր գործողությունների պատշաճ կատարումը:»:

Ուստի Դատավորը, հանդիսանալով իր աշխատակազմի անմիջական ղեկավարը, պարտավոր է նաև վերահսկել վերջիններիս գործունեությունը՝ դատարանի բնականոն գործունեության ապահովման համար և տվյալ դեպքում հետամուտ լինել իր վարույթում առկա գործերով դատական ակտերի օրենքով սահմանված կարգով հրապարակման և դատավարության կողմերին դատական ակտերն ուղարկելու գործընթացին:

Խորհուրդը միաժամանակ արձանագրում է, որ Դատավորի կողմից դատավարական իրավունքի նորմերի վերը նշված խախտումները հանգեցրել են դատավորի վարքագծի կանոնի խախտման, մասնավորապես վերջինս թույլ է տվել Օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով (ցանկացած գործունեություն իրականացնելիս և բոլոր հանգամանքներում դատավորը պարտավոր է զերծ մնալ դատական իշխանությունը վարկաբեկող, ինչպես նաև դատական իշխանության անկախության և անաչառության վերաբերյալ հանրության վստահությունը նվազեցնող վարքագիծ դրսևորելուց) և 70-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով նախատեսված առանց արդարադատության շահերին վնասելու՝ ողջամիտ ժամկետում և նվազագույն դատական ծախսերի կատարմամբ օրենքով իր իրավասությանը վերապահված հարցերը քննելու և լուծելու վարքագծի կանոնների խախտում:

Օրենսգրքի 142-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նույն գլխի իմաստով՝ արարքը համարվում է դիտավորությանը կատարված, եթե դատավորը գիտակցել է իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նույն գլխի իմաստով՝ արարքը համարվում է կոպիտ անփութությամբ կատարված, եթե դատավորը չի գիտակցել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը, թեև տվյալ իրադրությունում ակնհայտորեն կարող էր և պարտավոր էր դա անել:

Վերը նշված իրավանորմերի տրամաբանությունից բխում է, որ օրենսդրի կողմից արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտման վարքագծի առումով առանձնացվել են մեղքի դրսևորման երկու ձևեր՝ դիտավորություն և կոպիտ անփութություն:

Խորհուրդն արձանագրում է, որ դատավորի կարգապահական պատասխանատվության տեսանկյունից մեղքը դատավորի վերաբերմունքն է իր կողմից կատարված արարքի նկատմամբ:

Միաժամանակ որոշելու համար Դատավորի մեղքի ձևը՝ Խորհուրդը գտնում է, որ Դատավորն իրեն վերագրվող խախտումները կատարել է կոպիտ անփութությամբ, քանի որ չի գիտակցել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը, թեև տվյալ իրադրությունում ակնհայտորեն կարող էր և պարտավոր էր դա անել, այնքանով, որքանով չի հիմնավորել դատավարական նորմով սահմանված դատական ակտի հրապարակման և ուղարկման ժամկետի խախտումները՝ որևէ արդարացված նպատակով: Դատարանի նման վարքագծի դրսևորումը, ինչպես նաև այն հանգամանքը, որ դատական ակտը փաստացի տրամադրվել է կողմերից մեկին 1 տարի 3 ամիս ուշացումով կասկած է հարուցում նաև Դատարանի անկախության ու անաչառության նկատմամբ, դրանով իսկ նվազեցնում հանրության վստահությունը դատական իշխանության նկատմամբ:

Վերոգրյալի հիման վրա Խորհուրդն արձանագրում է, որ Դատավորի կողմից թույլ տրված խախտումներն իրենց բնույթի և հետևանքների առումով ստվերում են դատարանի անկախությունն և անաչառությունը, հանրության մոտ առաջացնում են անվստահություն Սահմանադրությամբ և Օրենսգրքով ամրագրված դատական իշխանության անկախության և անաչառության կարևորագույն սկզբունքների նկատմամբ:

Մինևնույն ժամանակ տույժի տեսակը որոշելիս Խորհուրդը հաշվի է առնում նաև այն, որ կարգապահական պատասխանատվության հարցի քննության պահին Դատավորը չի ունեցել կարգապահական տույժ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 94-րդ հոդվածի 6-րդ մասով, 142-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով, 149-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 154-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով և 155-րդ հոդվածով՝ Խորհուրդը,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Արդարադատության նախարարի պարտականությունները կատարող Արմենուհի Հարությունյանի միջնորդությունը՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ռուբեն Բունիաթյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, բավարարել: Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ռուբեն Բունիաթյանին հայտարարել նկատողություն:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և վերջնական է:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ԱՆԴԱՄՆԵՐ՝

Հատուկ կարծիք

Կ. ԱՆԴԻԵԱՍՅԱՆ

Ա. ԱԹԱԲԵԿՅԱՆ

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ե. ԹՈՒՄԱՆՅԱՆՑ

Դ. ԽԱԶԱՏՈՒՐՅԱՆ

Ն. ՀՈՎՍԵՓՅԱՆ

Ք. ՄԿՈՅԱՆ

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Վ. ՔՈԶԱՐՅԱՆ